ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2025 թվականի N 788-Ա

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ,
ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածը և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասը և 9-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Որպես նվիրատվություն Հայաստանի Հանրապետությանն ընդունել ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) «Քեմոնիքս ինթերնեյշնլ, Ինկ.» ընկերության կողմից տրամադրված գույքը՝ համաձայն NN 1, 2 և 3 հավելվածների:

2. Սույն որոշման N 1 հավելվածում նշված գույքն ամրացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին:

3. Սույն որոշման N 2 հավելվածում նշված գույքը սեփականության իրավունքով հանձնել «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ կազմակերպություն), իսկ N 3 հավելվածում նշված գույքը՝ «Արմենպրես լրատվական գործակալություն» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն):

4. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) «Քեմոնիքս ինթերնեյշնլ, Ինկ.» ընկերության հետ համատեղ ապահովել սույն որոշման NN 1, 2 և 3 հավելվածներում նշված գույքի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրատվության մասին պայմանագրի կնքման և հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում կազմակերպության և ընկերության տնօրենների հետ ապահովել սույն որոշման 3-րդ կետից բխող պայմանագրերի կնքման և հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

20.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ